

**ԶԱՐԹՈՆԿ** -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝

**www.zartonkdaily.com**

հնչաբե նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com  
zartonkdaily@yahoo.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

# ԶԱՐԹՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN  
 77րդ Տարի, թիւ 189 (21,430) **ԵՐԿՈՒՑԱՐԹԻ, 31 ՕԳՈՍՏՈՍ 2015** 4 էջ 1000 L.N.

1915-2015  
 Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարեդիպ

Remember and Demand  
 I Remember and Demand


Je me souviens et j'exige  
 أنا أتذكر وأطالب



**Լիբանանեան Լուրեր**

## Կեդրոնական Պեյրուֆի Մեծ Հաւաքէն Ետք Սպասողական Հանդարտութիւն

Հանդարտութիւն կը տիրէ կեդրոնական Պեյրուֆի Ռիատ Սուի հրապարակին վրայ, որ գրեթէ դատարկ է, բացի քանի մը երիտասարդներէ, որոնք կը պատմեն Շաբաթ գիշեր տեղի ունեցած ցոյցերուն իրենց մասնակցութեան եւ խառնակցութիւններուն մասին: Ներքին ապահովութեան ուժերը նախապէս յայտարարած էին, որ Շաբաթ օրուան մեծ հաւաքին յաջորդած խառնակցութիւններուն ընթացքին ձեռնարկած են առնուազն 10 անձեր, որոնք մեծ մասամբ Պեյրուֆի հարաւային արուարձաններէն եւ Հիւսիսային Պեքայէն են: Ապահովական ուժերը նաեւ յայտարարեցին երկու զինուորականներու վիրաւորման մասին: Սահմանափակ խառնակցութիւններ տեղի ունեցան, երբ բուն ցոյցը կազմակերպիչներուն կողմէ պաշտօնապէս աւարտած յայտարարուելէ ետք, քանի մը պատանիներ ու երիտասարդներ քարեր եւ շիշեր տեղացուցին ապահովական ուժերուն վրայ, հատելէ յետոյ վարչապետարանին մօտ տեղադրուած փշաթելի առաջին գիծը: Ներքին ապահովութեան ուժերը մեծ ինքնազստումի դիմեցին եւ խուսափեցան բախումներէ, սակայն բազմաթիւ զոհուածներէ ետք հրապարակ մուտք գործեցին եւ խառնակցիչները վտարեցին: Երեկուան հաւաքը սակայն կը յատկանշուէր իր բազմամարդ ներկայութեամբ: Տասնեակ հազարաւոր քաղաքացիներ ողողեցին Նահատակաց հրապարակը, ընդառաջելով երիտասարդական նախաձեռնութիւններու կոչին: Չափազանց շրջաններէ ժամանած եւ լիբանանեան դրօշը բարձրացուցած երիտասարդներ ու քաղաքացիներ՝ բողոքեցին փտածութեան դէմ եւ բարձրացուցին ընկերային-տնտեսական բարեկարգումներ պահանջող լուծուածներ: «Յոյսերիդ ելաւ» նախաձեռնութեան ներկայացուցիչները ընթերցեցին յայտարարութիւն մը, որուն մէջ պահանջեցին կենսոլորտի նախարարին հրաժարականը, ցուցարարներուն դէմ բռնութիւն գործադրողներուն բացայայտումը եւ պատժումը, աղբերու տազնապահ լուծումը, քաղաքացի-տնտեսական պատկանող գումարներու բացայայտումը, ինչպէս նաեւ նախագահական ու երեսփոխանական ընտրութիւններու կայացումը: Ցուցարարները կառավարութեան եռօրեայ ժամկէտ տուին՝ գործադրելու համար այս պահանջները, այլապէս խոստացան դիմել մագլցողական քայլերու:



**Հայրենի Լուրեր**

## Սահմանադրական Փոփոխութիւններուն Դեմ Բողոքի Ցոյց 4 Սեպտեմբերին

Սահմանադրական փոփոխութիւններուն դէմ բողոքի ցոյց մը պիտի կայացուի յառաջիկայ 4 Սեպտեմբերին: Հաւաքը պիտի կայացուի Բաղրամեան փողոցին վրայ գտնուող ՀՀ նախագահի նստավայրին դիմաց: Նշենք, որ այս մասին լուրը փոխանցուած է հայրենի «Կալա թի.Վի.» կայքը, որ այս առթիւ կարճ գրոյց մը ունեցած է Electric Yerevan բողոքի ալիքի կազմակերպիչներէն՝ Նարեկ Աւագեանին հետ:



## Սուրուճէն Հայաստան Փոխադրուող Սուրիահայերուն Ժամանումը Յետաձգուած է

Թուրքիոյ Սուրուճ ւանէն Հայաստան փոխադրուիլ որոշած սուրիահայերուն խումբին Երեւան ժամանումը յետաձգուած է: Այս մասին կը տեղեկացնէ «Արեւելք» կայքը, որ նաեւ յայտնեց, որ մեր հայրենակիցները շատ հուսահատաբար Երեւան ժամանեն յառաջիկայ Չորեքշաբթի օր: «Արեւելք» նաեւ տեղեկացուց, որ սուրիահայ մեր հայրենակիցներուն ժամանումին յետաձգումը կապ ունի վերջին պահուն խումբին հետ Երեւան գալ փափաքող մէկ հայրենակիցին օրինական թուղթերու համալրման հետ: Տեղին է նշել, որ ՀՀ Սփիւռքի նախարարութեան պատասխանատուներ շաբաթավերջին գտնուած են «Չուարթոնգ» օդակայան պատշաճ կերպով դիմաւորելու համար մեր հայրենակիցները: Յիշեցնենք, որ Հայաստան փոխադրուող մեր հայրենակիցներուն պիտի ընկերակցի Պոլսոյ Հայոց պատրիարքական տեղապահ Տ. Արամ Արք. Աթէշեանը, որ կարգ մը ազգայիններու հետ համադրաբար կարեւոր ներդրում ունեցած է այս գործի յաջողութեան ի խնդիր:

**Ծրցանային Լուրեր**

**Սուրիոյ Մէջ Զինադադարի Փորձերու Առջնութիւն Մարտերը Կը Շարունակուին**

Թուրքիոյ մէջ բանակցութիւնները կը շարունակուին սուրիական Ահրար Ալ Շամ կազմակերպութեան եւ իրանցի ներկայացուցիչներուն միջեւ, նոր զինադադարներ յայտարարելու կապակցութեամբ: Բանակցութիւններուն զուգահեռ մարտերը կը շարունակուին Զապատանիի, Իտիլիի եւ Դամասկոսի մօտակայ շրջաններուն մէջ, մինչ Տարայա շրջանը թիրախ դարձաւ պայթուցիչ քանակի մը տակառներու: Սուրիացի ընդդիմադիրներ յաջողեցան տիրապետել Լաթաքիոյ գիւղական կեդրոնական շրջաններէն մէկուն, մինչ ծանր մարտերը շարունակուեցան գաւազան շրջաններու մէջ: Հոսմի շրջանին մէջ աւելի քան 5 անձեր սպաննուեցան եւ 19 ուրիշներ վիրաւորուեցան, երբ թունաւոր նիւթեր պարունակող ռումբեր ինկան Ռէսթէնի մօտ: Սուրիացի ընդդիմադիրներ յայտարարեցին, որ մայրաքաղաք Դամասկոսի կեդրոնական հատուածին մէջ սպաննած են իրանցի զօրավար մը եւ անոր 6 ընկերակիցները:

**Նախարարներ Նուհատ Եւ Սուհամատ Մաշնուքներ Յստակացուցին**

Ներքին գործոց նախարար Նուհատ Մաշնուք յայտարարեց, որ վերջին ցոյցերուն ընթացքին տեղի ունեցած բախումներուն վերաբերող հետաքննութեան արդիւնքները՝ պիտի բացայայտուին յառաջիկայ Չորեքշաբթի օր: Իսկ կենսոլորտի նախարար Սուհամատ Մաշնուք, մեկնաբանելով իր հրաժարականը պահանջող կոչերը նշեց, որ այս հանգրուանին պիտի չգիշի իր պատասխանատուութիւններէն:

**Ժողովրդային Շարժումները Պետք Զէ Ծեղին Իրենց Ուղեգիծէն.**

Մարոնիներու պատրիարք կարտինալ Պըշարա Ռաաի կիրակնօրեայ իր քարոզի մէջ դիտել տուաւ, որ ժողովրդային երիտասարդական շարժումները պետք է շեղին իրենց ուղեգիծէն եւ գլխաւոր թիրախներէն: Ռաաիի համաձայն քաղաքացիները կը ներկայացնեն արդարացի պահանջներ, սակայն անոնք կոչ կ'ուղղեն նաեւ ունենալու լաւ ղեկավարներ:

**Երիտասարդական Շարժումները Պետք Է Լաւ Կազմակերպուած Ըլլան.**

Երեսփոխան Ռաաիի ճոմպարք կոչ ուղղեց լաւապէս ուսումնասիրելու երիտասարդական շարժումները եւ լաւ կազմակերպուելու, որպէսզի կարող մը կուսակցութիւններ քաղաքական օգուտ չքաղեն ժողովրդային բողոքի հաւաքներէն: ճոմպարքի համաձայն կարեւորը այն է, որ քաղաքացիները դուրս եկած են 8 եւ 14 Մարտ-երու հասկացողութեան:

**Սուրաքալալ Հոսանքը Դրուատեց Քաղաքացիական Կազմակերպութիւններու Ներկայութիւնը Ժողովրդային Հաւաքին**

Սուրաքալալ Հոսանքի երեսփոխանական պլոքը դրուատեց՝ քաղաքացիական հասարակական կազմակերպութիւններուն ներկայութիւնը նահատակաց հրապարակին վրայ: Յայտարարութեան մէջ հոսանքը դիտել տուաւ, որ երկրին մէջ տարածուած տազնապնդներուն գլխաւոր պատճառը՝ նոր նախագահի բացակայութիւնն է: Հոսանքը քաղաքական բոլոր ուժերուն կոչ ուղղեց ակնաչ տալու երիտասարդներու պահանջներուն, արագացը-

նելու նոր նախագահի ընտրութիւնը եւ բարեկարգումներ կատարելու՝ լուծումներ գտնելու համար ապրուստային հարցերուն:

**Բողոքի Հաւաք Կազմակերպողներուն Պահանջները Իրաւացի Են.**

Առողջապահութեան նախարար Ռաւէ Ապու Ֆաուր յայտարարեց, որ Ռիատ Սուի հրապարակին վրայ բողոքի հաւաք կազմակերպողներուն պահանջները իրաւացի են եւ պետք է լրջութեամբ մօտեցուի անոնց: Նախարարը կոչ ուղղեց լուծումներ գտնելու երկրի առջեւ ծառայած խնդիրներուն:

**Միշէլ Աուն Բողոքեց Ցուցարարներու Ամբաստանութիւններու Ընդհանրացման Դեմ**

Երեսփոխան Միշէլ Աուն բողոքեց, որ ցուցարարները կ'ընդհանրացնեն փտածութեան մասին իրենց ամբաստանութիւնները եւ կը մոռնան, որ իրենք եւս մաս կը կազմեն այդ ընդհանրութեան: Իսկ արտաքին գործոց նախարար Ժըպրան Պասիլ յայտարարեց, որ իրենք կը պատրաստուին 4 Սեպտեմբերին տեղի ունենալիք մեծ ցոյցին:

**Եթէ Անհրաժեշտութիւն Ըլլայ Պիտի Միանալք Աունի Հաւաքներուն**

Հատարարութիւնի դիմադրութեան պլոքի նախագահ երեսփոխան Սուհամատ Ռաատ յայտարարեց, որ Հըզպալլան պիտի չջողատուէ, որ իր դաշնակից երեսփոխան Միշէլ Աուն մեկուսացուի: Ըստ Ռաատի Աունը թիրախ դարձնել կը նշանակէ՝ Հըզպալլան եւ Ամալ հոսանքը հարուածել: Երեսփոխանը վերահաստատեց, որ եթէ անհրաժեշտ ըլլայ, ապա իրենք պիտի միանան Աունի փողոցի հաւաքներուն:

**Պըրրի Երկրին Տազնապը Լուծելու Առաջարկ Ներկայացուց**

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի Երկրի առօրեայի սանեցումը շարժելու քաղաքական նախաձեռնութիւն մը առաջարկեց՝ Մուսա Սատրի անհետացուման նուիրուած հանդիսութեան ընթացքին: Այս գծով Ամալ շարժումը երկէ երեկոյեան Նապաթիյէի մէջ կազմակերպեց՝ Սատրի անհետացման 37-րդ ամեակին նուիրուած հաւաք մը, ուր Պըրրի իր ճառին մէջ առաջարկեց երկրի տազնապը լուծելու առաջարկ ծրագիր մը, որ կը ներառէ նաեւ երկխօսութեան հանդիպումներ:

**Լուրեր Արաբական Աշխարհէն**

## Մեծ Հրդեհ Սեւուական Արաբիոյ Արամքօ-ի Համալիրի Մը Մէջ

Առնուազն 11 անձեր մահացան եւ 219 ուրիշներ վիրաւորուեցան, երբ մեծ հրդեհ մը բռնկեցաւ Սեւուական Արաբիոյ Տամ-մամ-հուկար մայրուղիին վրայ գտնուող շէնքերէն մէկուն մէջ: Տեղեկութիւններուն համաձայն հրդեհը բռնկած է Արաբ-ամերիկեան Արամքօ ընկերութեան համալիրին մէջ, ուր կը գտնուէին բազմաթիւ աշխատակիցներ: Եւ մինչ քաղաքացիական անվտանգութեան միաւորները կ'աշխատէին տիրապետելու բոցերուն եւ փրկելու վերապրողները, ընկերութիւնը նշեց, որ հարցաքննութիւնները սկսած են, բացայայտելու համար հրդեհին պատճառները:



**Միջազգային Լուրեր**

## Աւստրիոյ Մէջ Մահացած Գաղթականներու Պատասխանատուները Բացայայտելու Փորձ

Հունգարիոյ իշխանութիւնները կը շարունակեն իրենց հետաքննութիւնները, բացայայտելու համար Աւստրիոյ մէջ գտնուած 71 գաղթականներու դիակներու հարցով բոլոր մանրամասնութիւնները: Վերջին ժամերուն բացայայտուեցաւ պուլկարական հայտակութիւն կրող լիբանանցի մը լուսանկարը: Ան վարորդն էր նշեալ բեռնակառքին, որուն մէջ գտնուող գաղթականները մահացած էին: Կը կարծուի, որ լիբանանցի վարորդը կը մտադրէր Սերպիոյ եւ Հունգարիոյ սահմանները հատած գաղթականները Գերմանիա փոխադրել: Սակայն ան բեռնակառքը կանգնեցուցած էր մայրուղիին վրայ, մահացած գաղթականներու մարմիններուն հոտը անելով: Հունգարիոյ պաշտպանութեան նախարարութիւնը ամբողջացուց Սերպիոյ հետ սահմանային փշաթել մը բարձրացնելու աշխատանքը, կանխարգիլելու համար գաղթականներու մուտքը երկիր: Փշաթելը տեղադրուած է 175 քիլոմետր երկարող սահմանին վրայ: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Լորան Ֆապիուս իր կարգին դատապարտեց՝ գաղթականներու հարցով վարուելու երրօրեակ կարգ մը երկիրներուն որոշումները: Անոր համաձայն սահմանային փշաթել բարձրացնելու որոշումը չի յարգէր երրօրեակն չափանիշները:

**Իրաքի Մէջ ՏԱԵՇ-ի Դեմ Ուժգին Հարուածներ**

Իրաքի ապահովական ուժեր դէմ դրին Իսլամական պետութիւն կազմակերպութեան՝ ՏԱԵՇ-ի յարձակումներուն, մասնաւորաբար Անպար Նահանգին մէջ, ուր ՏԱԵՇ-ի դէմ զինուորական գործողութիւն մը կ'իրականացուի միջազգային դաշինքի ուժերուն օգնութեամբ: Տեղեկութիւններու համաձայն Ռամատիի ուղղութեամբ տեղի ունեցած յարձակումներուն ընթացքին, սպաննուած են ՏԱԵՇ-էն աւելի քան 40 զինեալներ: Իրաքի ուժերը նաեւ յարձակումներ գործեցին Սալահուդին գաւառը Անպարին կապող գլխաւոր ճամբաներուն վրայ: Քաղաքական առումով, Իրաքի խորհրդարանը կը քննարկէ որ վաւերացնէ պաշտպանութեան նոր օրինագիծ մը, դէմ դնելու համար ահաբեկչութեան վտանգին:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կայացաւ «Արի Տուն» Ծրագրի 2015թ. Վերջին՝ 8-Րդ Փուլի Փակման Հանդիսաւոր Արարողութիւնը

Օգոստոս 28-ին՝ ժամը 18.00-ին, Ծաղկածորի «Արի տուն» ճամբարին մէջ տեղի ունեցաւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Արի տուն» հայրենաճանաչութեան ծրագրի 2015թ. վերջին՝ 8-րդ փուլի փակման հանդիսաւոր արարողութիւնը, որուն ներկայ էին ՀՀ Սփիւռքի նախարարի տեղակալ Սերժ Սրայպինտեան, նախարարութեան աշխատակիցներ, հիրեր:



ՀՀ Սփիւռքի նախարար Հրանտ Զակարեանի ողջունի խօսքը փոխանցելով արիտուններուն՝ ՀՀ Սփիւռքի նախարարի տեղակալ Սերժ Սրայպինտեան մասնաւորաբար կ'ըսէր. «Սիրելի՛ արիտուններ, սիրով ողջունում եմ ձեզ: «Արի տուն» ծրագիրը ոչ միայն հայապահպանութեան, այլև հայրենաճանաչութեան ծրագիր է: Այս 14 օրերի ընթացում դուք խորապէս ճանաչեցիք ձեր Հայրենիքը՝ իր հարուստ մշակոյթով եւ արժանիքներով: Յիշէ՛ք Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսյանի պատգամը՝ տանը խօսել՝ հայերէն: Դա է հայ մշակույթի պայմանը: Բարով էիք եկել ձեր Հայրենիք: Մենք անհամբերութեամբ կը սպասենք ձեր յաջորդ գալուստ՝ որպէս մեծ վաստակի տեր հայրորդներ եւ հայրենասէր»:

Փոխնախարարը արիտուններուն յիշեցուց, որ քիչ առաջ անոնք կ'արտասանէին Երիշէ Զարեանի «Ես իմ անուշ Հայաստանի» «աղօթքի» խօսքերը՝ «Ուր էլ լինես՝ չեմ մոռնայ ես ողբաձայն երգերը մեր» եւ անեցուց, որ այսօր մենք ի տարբերութիւն Զարեանի ապրած ժամանակին, կ'ապրինք մեր յաղթանակներու դարը, ուստի պետք է նաեւ չմոռնանք «Յաղթական երգերը մեր»:

Այնուհետեւ արիտունները հանդես եկան ազգային երգի ու պարի գեղեցիկ կատարումներով, որուն պատրաստում էին ճամբարային օրերուն ընթացքին: Ծրագրի մասնակիցներուն ողջունեց մենեքզուկի Անահիտ Սահակեան:

Վերջին փուլի արարող ազգարարուցաւ հրաժեշտի արարական խարոյկով:

Նշենք, որ ծրագրի ութերորդ փուլին մասնակցելու համար Հայաստան ժամանած էին շուրջ 65 երիտասարդներ աշխարհի 12 երկիրներէ՝ Ռուսաստանէն, Ուքրաինայէն, Պելառուսիան, Ֆրանսայէն, Լեհաստանէն, Մեծ Բրիտանիայէն, Պուլկարիայէն, Եսթոնիայէն, Ռումանիայէն, ԱՄՆ-էն, Սուրիայէն եւ Լիբանանէն:

Հայաստանի Բարձր Վարկանիշը Միջազգային Ցուցակի Վրայ. Իրականութիւն, Թե՛ Տպաւորութիւն

Աշխարհի 152 երկիրներու «Մարդու ազատութեան ցուցակի» վերջին գեկոյցին մէջ, գարմանալիօրէն Հայաստանին տրուած է բարձր վարկանիշ: Ուսումնասիրութիւնը համատեղ իրականացուած է Ուաշինկթընի Զաթթի հիմնարկի, Վանքուվըրի Ֆրէյզըրի հիմնարկի եւ Պերլինի Ֆրիտրիխ Նաումանի անուան յանուն ազատութեան հիմնադրամի կողմէ: 108 էջեր բաղկացած համապարփակ գեկոյցը երկիրները կը դասէ ըստ քաղաքացիներու անհատական, քաղաքացիական եւ տնտեսական ազատութիւններուն:

Դասակարգումը հիմնուած է 76 տարբեր ցուցանիշներու վրայ՝ խմբաւորուած 12 անուանակարգերու մէջ.

- Օրէնքի գերակայութիւն
  - Ապահովութիւն եւ անվտանգութիւն
  - Ծաղմում
  - Կրօն
  - Միութիւն, հաւաք եւ քաղաքացիական հասարակութիւն
  - Արտայայտութիւն
  - Կառավարութեան մեծութիւն
  - Իրական համակարգ եւ սեփականութեան իրաւունք
  - Դրամական միջոցներու մատչելիութիւն
  - Միջազգային առեւտուրի ազատութիւն
  - Վարկային, աշխատանքային եւ գործարար օրէնսդրութիւն:
- Ըստ «Մարդու ազատութեան ցուցակի»-ին՝ աշխարհի տասը լաւագոյն երկիրներուն մէջ են Հունկ Զուլը, Չուիցերիան, Ֆինլանտան, Դանիան, Նոր Չեկանտան, Քանադան, Աւստրալիան, Իրլանտան, Անգլիան եւ Շուեդը: Միացեալ Նահանգները 20-րդ դիրքի վրայ է:

Անցեալ շաբաթ հրապարակուած 2012 թուականի տունայնորդներուն համաձայն, Հայաստան աշխարհի մէջ 53-րդն է, աւելի բարձր, քան անոր հարեաններէն շատերը՝ Ատրալիան (126-րդ), Թուրքիան (62-րդ), Իրանը (152-րդ) եւ փոքր զիջում մը Վրաստանին (48-րդ):

Հայաստանի տպաւորիչ վարկանիշը կը բացայայտէ աւելի ապշեցուցիչ գնահատական, երբ նկատի ունենաս այդ դասակարգման երկու հիմնական բաղադրիչները. Հայաստանը աշխարհի մէջ կը գրաւէ 17-րդ դիրքը տնտեսական ազատութեան եւ 70-րդը՝ անձի ազատութեան ցուցանիշներուն մէջ...:

Հայաստանի վարկանիշը եւ «գարմանալի» որակեցի այն պատճառով, որ ժողովուրդին մեծ մասը հաւանաբար չէր ակնկալէր նման բարձր գնահատական՝ հաշուի առնելով ղեկավարութեան նկատմամբ մնայուն քննադատութիւնը, ինչպէս երկրի մէջ, այնպէս ալ անկէ դուրս: Թե՛ն ճիշդ է, որ Հայաստանի կառավարութիւնը բազմաթիւ թերութիւններ ունի եւ արժանի է քննադատութեան, սակայն պետք է ընդունուի, որ իշխանութիւնները կարգ մը բաներ ճիշդ ըրած են Հայաստանի համար, որ իր վարկանիշով «Մարդու ազատութեան ցուցակի» գերազանցած է այնպիսի ազդեցիկ երկիրներու, ինչպիսիք են Արժանութիւնը, Պրագիլը, Չինաստանը, Եգիպտոսը, Յնդկաստանը, Իրանը, Զուլը, Մեքսիքան, Զաթարը, Ռուսիան, Մեուտական Արաբիան, Թուրքիան, Ուքրաինան եւ Վենեզուելան:

Ժողովուրդին կողմէ Հայաստանի ընկալման եւ իրականութեան միջեւ առկայ այս հակասութեան հաւանական բացատրութիւնը այն է, որ Հայաստանի պաշտօնեաները վատ աշխատանք տարած են երկրի ձեռքբերումները գովազդելու համար: Հակառակ պարագային մեծ թիւով հայեր այսպիսի բացասական տպաւորութիւն չէին ունենար իրենց Հայրենիքին մասին:

Այս միտքը պարզաբանելու համար առնենք օրինակը Սինկափորին՝ երկիր մը, որ յաջողութեամբ կը գովազդէ իր տնտեսութիւնը եւ բարձր կը գնահատուի ամբողջ աշխարհի մէջ՝ իբրեւ լաւ կառավարման, արագ տնտեսական զարգացման եւ բարեկեցիկ կենսապայմաններու նախատիպ: Հակառակ նոր, որ կասկածէ վեր է, թէ այս «ասիական վագրը» ձեռքբերումներու տպաւորիչ ցուցանիշ սահմանած է, սակայն գարմանալի է, որ Սինկափորը վարկանիշային ցուցանիշով աշխարհի մէջ կը գրաւէ 43-րդ դիրքը՝ ընդամենը 10 կետով առաջ անցնելով Հայաստանէն «Մարդու ազատութեան ցուցակի»ով: Եթէ ուշադրութիւն դարձնենք Սինկափորի շուրջ ստեղծուած աղմուկին վրայ, կարելի էր ենթադրել, որ այդ երկիրը պետք է տեղ գրաւէր լաւագոյն տասնեակին մէջ, իսկ Հայաստանը ըլլար 100-րդը՝ հաշուի առնելով վերջինիս հասցէին մշտապէս հնչող քննադատութիւնները:

Ինչպէս կ'ըսեն՝ «տպաւորութիւնը իրականութիւն է»: Ըստ էութեան տպաւորութիւնը շատ աւելի կարեւոր է, քան իրականութիւնը, քանի որ մարդիկ ամէն ինչ կը դատեն իրենց սեփական տպաւորութիւններուն հիմէ՝ անկախ անկէ, թէ անոնք որքան կը տարբերին իրականութենէն: Օրինակ վերջին տարիներուն Հայաստանը շարք մը միջազգային գեկոյցներու մէջ գրաւած է շատ բարձր դիրքեր, քան կը սպասուէր: Սակայն Հայաստանի կառավարութիւնը երբեք չէ գովազդած այս կարեւոր վարկանիշները՝ ատով իսկ ճախողցնելով երկրի համար դրական երեւոյթի ստեղծումը, որ կրնար գրաւիչ ըլլալ օտարերկրեայ զբօսաշրջիկներու եւ ներդրողներու համար:

Հետաքրքրական է, որ Հայաստանէն շատ աւելի բարեկեցիկ երկիրներ են մնացած են «Մարդու ազատութեան ցուցակի»-ին մէջ, որ կրնայ նշանակել, թէ երկրի հարստութիւնը, Արտադրանի պարագային՝ քարիւղի բազմամիլիարտոնց եկամուտները, բարեկեցութիւն կամ ազատութիւն չեն երաշխաւորեր իրենց քաղաքացիներու համար...:

Սակայն հաշուի առնելով Հայաստանի համեմատաբար բարձր վարկանիշը՝ անոր ղեկավարութիւնը այլեւս չի կրնար արդարանալ, թէ երկրի զարգացումը կը կադայ նիւթական եւ բնական պաշարներու սահմանափակութեան պատճառով: Ամէն ինչ կայնեալ չէ փողէն: Զանի որ Հայաստանը տնտեսական ազատութեան ցուցանիշով կը գրաւէ 17-րդ դիրքը, ուստի արդարացում չի կրնար ըլլալ անձի ազատութեան ցուցանիշով 70-րդ դիրքը գրաւելուն համար: Վերջին ցուցանիշը կրնայ մեծապէս բարելաւուիլ պետութեան կողմէ՝ առանց դրամ մը իսկ ծախսելու: Միայն անհրաժեշտ են հոգատար պետական պաշտօնեաներ, որոնք յանձնառու պիտի ըլլան բարեկեցութեան ժողովուրդին բարեկեցութիւնը:

Հայաստանի ղեկավարութեան մեծագոյն բացը ոչ թէ նիւթական միջոցներու, այլ հասարակութեան վստահութեան պակասն է: Իշխանութիւնները կրնան վերականգնել քաղաքացիներուն վստահութիւնը ջանարդաբար աշխատելով, որպէսզի կարողանան բարելաւել անոնց կենսապայմանները, եւ միայն անկէ ետք հասարակութեան դրական ընկալումը պիտի համապատասխանէ Հայաստանի համաշխարհային վարկանիշի իրականութեան:

**ՅԱՐՈՒՑ ՍԱՍՈՒՆԵԱՆ**  
«Քալիֆորնիա Զուրիդը» թերթի հրատարակիչ եւ խմբագիր  
Թարգմանեց՝ **ՌՈՒՂԱՆՆԱ ԱՄԵՐԻՍ**  
Արեւմտահայերէնի վերածեց՝ «Եռագոյն» կայքը

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՅՍՕՐ ՌՈՍԻԿ ՍԱՐԴԱՐԵԱՆ



Մեր թուականէն 1 տարի առաջ՝ 2014ին մահացած է հայ բանաստեղծ Ռոսիկ Սարգարեան:

Ռ. Սարգարեան ծնած է 24 Յ ու ն ու ա թ 1945ին, Դափան (այժմ Կապան): Ըստ տոհմական անանդագրոյցի, անոր մեծ հայրը եղած է Դաւիթ

Պէկի ներկայացուցիչը Պարսկաստանի մէջ եւ ունեցած է Սարգարի լիազօրութիւն, այդ պատճառով ալ Թումանեան մականունը փոխուած է Սարգարեանի: Փոքր տարիքին հաստատուած է Երեւան: Աւարած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժինը: Աշխատած է Հայաստանի մամուլի, հեռուստատեսութեան եւ ձայնասփիւռի մէջ: 1981ին Պարոյր Սեւակի մասին տուած հարդարումի մը համար, գաղափարական բնոյթ կրող նիւթերու ամբաստանութեամբ հեռացուած է աշխատանքէն: Հայաստանի անկախութեան սկզբնական շրջանին մասնակցած է՝ Կապանի առաջին ինքնապաշտպանական ջոկատներու ստեղծման աշխատանքին: 1993էն սկսեալ սկսած է աշխատակցիլ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան «Հայ Չինուոր» պաշտօնաթերթին:

Ռ. Սարգարեանի բանաստեղծութիւնները, թարգմանութիւնները եւ յօդուածները պարբերաբար լոյս տեսած են գրական տարբեր հրատարակութիւններու մէջ: 1991ին ընտրուած է Հայաստանի գրողներու միութեան եւ Հայաստանի լրագրողներու միութեան անդամ: Անոր գործերէն են «Վայրկեաններու Երգը», «Հոգու Երկիրը», «Ձրոսի ժամանակը» եւ այլ երկեր ու ժողովածուներ:

Ռ. Սարգարեան 2000ին պարգևատրուած է Պարոյր Սեւակի անուան մրցանակով:

Այցելեցէ՛ք  
Վարդագէ՛ք  
Տարածեցէ՛ք  
www.RagMamoul.net-ը

Գալ տարի Վան Պատառիկներ Երագային Արեւմտահայաստանէն Մ ե Ր ա Ր ա տ ը

Յովհաննէս Շիրազը արդէն ըսած էր մեզի՝ Զեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սեւ ամպից, Որ տուն բերես շալակած արդարութեամբ մեր անթիծ, Ու կը բերես, իմ բալիկ, թէկուզ քո խեղճ թաթիկով՝ Մեր սարն այս կողմ շուռ կը տաս՝ արդարութեան ուժն է ծով:

Կարծես Արարատը պիտի գրկէր մեզ: Պասիկը կը սուրբար: Մենք երկրորդ պահին մեջն էինք: Առաջին պատը քանի մը հարկուր մեղր առաջ անցած էր: Մեր քիւրտ վարորդը, որպէսզի հասնի անոր եւ քիչ մըն ալ քարիւղ խնայէ, ճամբէն շեղեցաւ, կտրուկ ճիզը առաւ եւ աւագուտ, քարքարուտ տեղերէ սկսաւ երթալ: Յանկամար պասին անիջ խրեցան առաջներուն մէջ: Ի՛նչ որ ըրինք, կարելի չէրաւ պատը ազատել: Բաւական մը մօտեցած էինք Արարատի անմիջական ստորոտին, բայց տակաւին մօտ երեքէն չորս մղոն կար բուն ստորոտին կամ առաջին վերելքին հասնելու: Ստիպուած սկսանք քալել: Շատեր բողոքեցին, մանաւանդ Տիկ. Աստղիկ Դազարեանը, որ քալելու դժուարութիւն ուներ եւ գաւազանի օգնութեամբ կը քալէր: Աւելի քան երկու մղոն քալելէ ետք սկսանք յոգնութեան նշաններ ցոյց տալ: Կեցանք, խմբակարներ եւ «սէֆի»ներ սկսանք առնել ու զիրար «միջիթարէլ» ըսելով, որ այստեղէն աւելի լաւ կ'երեւայ Արարատը...: Դոկու. Կարպիս Տեր Եղիայեանը «Ասպարեզ» օրաթերթի օրինակ մը հանեց գրպանէն եւ գայլ լայն բանալով նկարեցաւ: Այդ ընելով արդեօք Կարպիսը ասպարեզ՞ կը կարդար թուրքերուն, թէ ըսել կ'ուզէր «Նոր Օր» մը «Ասպարեզ»ը, «Մասիս»ին եւ հայկական միւս թերթերուն հետ, հոս պիտի տպենք...:

Երբ մեր ուղեկցորդը տեսաւ, որ շատ բարկացած ենք՝ որովհետեւ պատը կէտ ճամբան մնաց եւ մեզ մինչեւ ստորոտը չտարաւ, մեզ հանդարտեցնելու համար ըսաւ որ հոն, ճիշդ հոն որ մենք կ'ուզէինք երթալ, քրտական գիւղեր կան զինեալներով լեցուն, որոնք ապստամբած են թուրք կառավարութեան դէմ եւ թէ շատ վտանգաւոր է հոն երթալը: Քիւրտ զինեալները պատանդներ կը վերցնեն եւ շատ մեծ գումարներ կը պահանջեն: Մենք ալ հաւատացինք...: Բայց եթէ ճիշդ էր ըսածը, անելի լաւ, կ'երթայինք եւ մարդոց քիչ մը դրամ կու տայինք իրենց «սրբազան առաքելութիւնը», երագը քաջալերելու:

Տիգրան եւ Պերճ Դորդրեանները որոշած էին անապայման Արարատի առաջին բարձունքները մագլցիլ: Գացին: Մենք՝ տարիքով քիչ մը աւելի յառաջացածներու... մնացինք եւ այդտեղէն վայելեցինք Արարատը: Հրաքիտային քանի մը փոքր քարեր հաւաքեցինք միասին տուն տանելու:

Կը նայիմ չորս կողմ: Ճայռեր: Ճայռեր: Մեծ ու փոքր, սեւ ու կարմիր, իրարու վրայ դիզուած Ճայռեր: Հա՛ւա՛: Հիմա հոս կը հասկնաս, որ այս հայ ժողովուրդը ինչպէ՛ս դիմացել է աւելի քան չորս հազարամեակներ, երբ պատմութեան ընթացքին բարբարոս ցեղերը շարան-շարան եկեր, ջարդեր ու անցեր են այս երկրէն: Ո՞ր ազգը կրնար դիմանալ անվերջ հալածանքներուն, անվերջանալի ջարդերուն, իրարայաջորդ հազարաւոր

կողոպուտներուն, առեւանգումներուն, մանկահաւաքներուն: Ո՞ր ազգին մշակոյթը կրնար տոկալ իր վանքերուն կողոպուտին, ձեռագիրներու հրկիզումներուն, տաճարներու կործանումին, մշակութային կոթողներու քանդումներուն: Ո՞ր ազգը կրնար դիմանալ իր քաղաքներուն եւ ուստաններուն հորդեղներուն, հորոճարակ դարձած պալատներուն եւ ամրոցներուն փճացումին: Ո՞ր ազգը կը դիմանար բազմաթիւ մահասփիւռ հրաբուխներու եւ սարսափազգու երկրաշարժներու անելներուն: Մե՛նք: Մե՛նք, քանի որ մե՛նք միայն Արարատ ունինք: Այս ժայռերուն մէջ հազարամեակներ ապրելէ, ժայռաքեր ենք նաեւ մենք: Ճայռի պէտ տոկուկ: Արարատի պէտ յաւերժ:

Կը նայիմ Արարատին դարձեալ: Կը խոնարհիմ անոր առջեւ: Արարատը բոլորովին տարբեր իմաստ ունի արեւմուտքէն դիտելով: Որքան վեհանիստ է ան Երեւանէն դիտուած, այնքան խորիստ է արեւմուտքէն: Արարատը ժպիտով կը նայի Երեւանին: Հոս՝ խոժոռ է ան եւ տխուր: Ըմբոստ է ան եւ բողոքարկու:

Ան կ'ուզէ տուն երթալ: Ան կ'ուզէ գրկուիլ՝ ի՞ր հարազատներուն կողմէ:

Չես կրնար չընդգծիլ եւ չուխտել, որ ամէն ինչ պիտի ընես Արարատի վերատիրանալու: Եւ մենք այդ ուխտը կատարեցինք: Աւետիզ Իսահակեանի բանաստեղծութիւնը յիշելով, անգամ մը ես ոտքս գետին զարնելով, յուզումես պայթող սրտես արդարակեցի:

*Արարատի ձեր կատարին  
Դար է եկել, վայրկեանի պէտ,  
Ու անցել:  
Անհուն թըռով կայծակների  
Սուրն է բեկուել աղամանդին  
Ու անցել:  
Մահախուճապ սերունդների  
Աչքն է դիպել լոյս գազաթին  
Ու անցել:  
Հերթը հիմա քունն է մի պահ.  
Դու էլ նայիր սեզ ճակատին  
Ու անցիր:*

«Ու անցիր» բառը պետք է ըլլար՝ «Կորստի՞ր» կամ անկէ ճիշդ՝ «Սիկտի՞ր եղիր» (յարգելով մեր յօդուածագիր Լեւոն Անկեր Վրայի փոփոխումը այս տողը չփոխելու, կը պահենք գայլն ապախելով մեր սիրելի ընթերցողներուն հասկացողութեան. «հսմբ.»): Մեր պատը կարելի չէրաւ արագափորումէն ազատել: Ուրիշ պատ մը բերին եւ խեղով բարով վերադարձուցին պատնոյցը: Յաջորդ առտու ճամբայ ելանք դէպէ Անի:

**ԿԱՐԳԵՍ ԳՈՐԾԻՆԵՆ**  
(Շարունակուած նախորդ թիւէն եւ վերջ)



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԱՄՆ-ի Մէջ Պիտի Բացուի Օսմանեան Ժամանակաշրջանի Հայ Նկարիչներ Տիլտիլեան Եղբայրներու Լուսանկարներու Ցուցահանդէսը

ԱՄՆ Հարաւային Զոնէքթիթի պետական համալսարանին մէջ, Սեպտեմբեր 10-էն Հոկտեմբեր 18 պիտի բացուի՝ Տիլտիլեան եղբայրներու ընտանեկան արխիւէն ընտրուած լուսանկարներու ցուցահանդէսը: Լուսանկարները կը պատկանին 1872-1923 թուականներուն: Ընտանիքին երրորդ սերունդի ներկայացուցիչ Արմէն Յուլիա Մարտուպեանի հաւաքած լուսանկարներու հաւաքածոյին մէջ կան 900 լուսանկարներ:



The Armenian Mirror Spectator շաբաթաթերթի փոխանցմամբ՝ լուսանկարներու ցուցահանդէսը նուիրուած է Հայոց Ցեղասպանութեան, կը գրէ Արցախփրէսը:

19-րդ դարու Անատոլիոյ հասարակական կեանքը եւ Հայոց Ցեղասպանութեան շարք մը դրուագներ պատկերող լուսանկարներու հաւաքածոն, այժմ կը պատկանի Հարաւային Զոնէքթիթի պետական համալսարանի փրոֆեսոր Արմէն Մարտուպեանին եւ Յուլիա Տիլտիլեանին: Յուլիա եւ Արամ Տիլտիլեանները լուսանկարիչներ եղած են Օսմանեան կայսրութեան մէջ եւ աշխատած Մերզիֆոնի Անատոլիա թղծը:

Անգլիացի շաբաթաթերթի հարողմամբ՝ ցուցահանդէսի բացման արարողութեան Հարաւային Զոնէքթիթի պետական համալսարանի տնօրէն Մերի Փափագեան, համալսարանի նախագահի մետալով պիտի պարգևատրուէ հաշտուող Արմէնի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի տնօրէն Ռուբէն Սիրգախանեանը՝ Հայաստանի մէջ կրթութեան որակը բարձրացնելու համար:

Լուսանկարներու ցուցահանդէսը ցուցադրուած է Սթամպուլի, Մերզիֆոնի եւ Տիլտիլեանի մէջ: Կը նախատեսուի ցուցահանդէսի կազմակերպել նաեւ Լոնտոնի, Անգարայի, Երեւանի եւ Ռոթթըրհամի մէջ:

«Մոռցուած Ցեղասպանութիւն» Վաւերագրական Ֆիլմի Ցուցադրութիւն Դամասկոսի Մէջ

Հովանաւորութեամբ Ն.Ս. Եփրեմ Ամորի Ուղղափառ Պատրիարքի, Զորեքշաբթի 26 Օգոստոս 2015-ին, Դամասկոսի Ազգային օփերայի սրահին մէջ տեղի ունեցաւ՝ «Մոռցուած Ցեղասպանութիւն» Վաւերագրական Ֆիլմի ցուցադրութիւնը:




Վաւերագրական տեսանկյունով նուիրուած էր ասորի ժողովուրդի ցեղասպանութեան, եւ կը ներկայացնէր վաւերագրական նիւթեր՝ հարիւր տարիներ առաջ տեղի ունեցած ողբերգութեան մասին:

Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Եպս. Նալպաստեան, Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցի Յանձնախումբի անդամներ, ազգայիններ եւ դամասկոսիայի Ն.Ս. Եփրեմ Ամորի Ուղղափառ Պատրիարքին հրաւերով ներկայ գտնուեցան, «Մոռցուած Ցեղասպանութիւն» Վաւերագրական Ֆիլմի ցուցադրութեանը:

1915ի Մասին Պատմող «Կորուսեալ Թռչուններ»ը Արդէն Կարելի Ե Դիտել Թուրքիոյ Շարժանկարի Սրահներուն Մէջ

Այս շաբաթ Թուրքիոյ շարժանկարի սրահներուն մէջ սկսեալ 9 նոր ֆիլմերու ցուցադրութիւն, որոնցմէ 2-ը թրքական արտադրութիւն են, միւսները արտասահմանեան: Թրքական Sondakika.com լրատուական կայքին համաձայն՝ մեծ պատահաբար շարժանկարը նոր ֆիլմերու մէջ է նաեւ «Կորուսեալ Թռչուններ»ը՝ 1915ի մասին Թուրքիոյ մէջ նկարահանուած առաջին գեղարուեստական ֆիլմը, կը գրէ ermenihaber.am-ը:



Ֆիլմի բեմագործի հեղինակն ու բեմադրիչներն են հայ Արէն Փերտեմի եւ թուրք Էլա Ալեամաչը: Գլխաւոր դերերով նկարահանուած են թուրք Տիլա Ուլուճան եւ Ահմետ Ուզը, ինչպէս նաեւ հայ Արսո Արսէնեանն ու Հերոս Յակոբեանը:

Ֆիլմի իրադարձութիւնները կը պատահին Հայոց Ցեղասպանութեան ընթացքին, մէկ գիշերուան մէջ իրենց մարտիչ ընտանիքը կորսնցուցած քոչ ու եղբոր՝ Մարիամի ու Արտիոյ իրենց հարազատներուն որոնումներուն շուրջ:

Աշակերտը ՀՀ Նախագահին Առաջարկեց Հայոց Լեզուի Համահայկական Մրցոյթ Իրականացնել

Մինչ ուսումնական տարւան մեկնարկը բարձր յառաջդիմութիւն ունեցող եւ միջազգային մրցոյթներուն բարձր տեղեր գրաւած Հայաստանի դպրոցականները նախագահական նստավայր ներկայացան՝ հանդիպելու նախագահին եւ անկէ ստանալու պարգէներ ու շնորհաւորանքներ: Անոնց հետ հանդիպման ժամանակ նախագահը շեշտեց, որ տարատեսակ հանդիպումներու ընթացքին մեծ գոհունակութեամբ եւ հպարտութեամբ կը խօսի՝ հայ դպրոցականներու յաջողութիւններու եւ յատկապէս վերջերս միջազգային մրցոյթներուն տարած յաջողակներուն մասին: Միւրօր Յերացիի անուան բժշկական համալսարանի ուսանող Աշոտ Աթայեան նախագահական նստավայր այցելած էր զինտրական համաձայնագրով:



«Արմէնփրէս»-ի հետ զրոյցի ընթացքին Աշոտ պատմեց, որ ընտելութիւններ յետոյ գորակոչուած է բանակ եւ այժմ կը ծառայէ Արարատի զօրամասին մէջ: «Հայրտ եմ, որ զինտրական համաձայնագրով ստացայ մետալ եւ երջանիկ եմ, որ իմ գիտելիքներս պիտի օգտագործեմ ի շահ մեր բանակին», ըսաւ ալ:

«Մեղու. հայերէնը բոլորի համար» մրցոյթի յաղթող Լեւոն Սահակեան նախագահին առաջարկեց, որ յաջորդ տարուընէ հանրապետութեան մէջ համահայկական հայոց լեզուի մրցոյթներ կազմակերպուին: Նախագահին գնահատմամբ առաջարկութիւնը հետաքրքրական էր եւ չի բացառուիր, որ Համահայկական խաղերու ծրագիրէն ներս իրականանայ նաեւ հայոց լեզուի մրցոյթը:

Դանիոյ մէջ Կենսաբանութեան միջազգային մրցոյթէն արծաթէ մետալով վերադարձած Սիրանոյշ Բաբախանովան, նախագահական նստավայրին մէջ երկրորդ անգամ կը գտնուէր՝ նախորդ տարի Նոյն մրցոյթէն պրոնզէ մետալով վերադառնալով ու կրկին նախագահէն պարգէի արժանացած ըլլալով:

«Բարի աւանդոյթ է երկրի նախագահի կողմից նման ընդունելութիւնն ու պարգէների բաշխումը, բարոյական խրախուսանքը մեր լաւագոյն աշակերտներին: Նման երեխաներն են մեր երկրի ապագան, նրանք են մեր լաւագոյն պարծանքը: Երեխաներ, որոնք համար կարելի է վստահաբար ասել, որ գիտելիքով են բացում իրենց կենսի ճանապարհը: Նրանք գիտեն, որ իրենց մտաւորական կարողութիւններով կարող են ճանապարհի հարթել», ձեռնարկի աւարտին լրագրողներուն հետ զրոյցի ընթացքին ըսաւ Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան նախարար Արմէն Աշոտեան՝ աւելցնելով, որ աշակերտները այս տարի շատ լաւ արդիւնքներ արձանագրած են:

Միջազգային մրցոյթներուն հայ աշակերտները նուաճած են 20 մետալներ, որ մրցանիշ է Հայաստանի համար՝ այն պարագային, երբ չեն մասնակցած Պաշտի մէջ կայացած քիմիայի մրցոյթին: Այս տարի աճած է շրջանաւարտ ոսկէ մետալակիրներու թիւը, որոնք 73 են՝ նախորդ տարուան 47ի դիմաց:

ՄԱԿ-ը Պատերազմական Ոճի Կը Նկատէ Պաալ Շամի Տաճարին Ընդհանրացումը

ՄԱԿ-ի Կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի հարցերով զբաղող կազմակերպութիւնը՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ն, Սուրիոյ Փաւմիրա քաղաքին մէջ հնադարեան Պաալ Շամի տաճարին քանդակումը մարդկութեան համար մեծ կորուստ համարած է, իսկ Իսլամական պետութեան այդ արարքը պատերազմական ոճի: Այս մասին կը հարողրէ ՊիՊիՍԻ-ն:



«Այդ տաճարի քանդակումը մեծ կորուստ է Սուրիոյ ժողովուրդին եւ ամբողջ մարդկութեան համար», նշած է կազմակերպութեան ղեկավար Իրինա Պոզովա: Ան նշած է, որ յանցագործները պետք է պատասխանատուութիւն կրեն իրենց արարքներուն համար:

Պաալ Շամի տաճարը, որ կառուցուած է մօտաւորապէս 2000 տարի առաջ, իսլամ ծայրայեղական ահաբեկիչներուն կողմէ փլուզուած է Կիրակի օր:

Հնագետներ Պաալ գերագոյն չաստուածին նուիրուած այս տաճարը կը համարեն քաղաքի ամենէն թանկ եւ լաւ պահպանուած մասնիկներէն մէկը: Նախապէս ան մասամբ վերականգնուած էր:

Տաճարին քանդակումը դատապարտեց նաեւ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Զի Մուն:

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԷՆ

FoxNews. Պատերազմական Գօտիէն Չքօսաշրջային Դրախտի Վերածուած Հայաստան

FoxNews պարբերականը հրապարակած է ցանկ մը, ուր կը խօսուի պատերազմի տառապանքէն անցած, սակայն ներկայիս զքօսաշրջային դրախտավայրի վերածուած երկիրներու մասին՝ կը գրէ panorama.am-ը:

Առանձնացուած 9 երկիրներու շարքին մէջ է նաեւ Հայաստանը:

«Հայաստանի համար բնականուր կենսի ընթացքի խաթարումները խորթ են: Մայրաքաղաք Երեւանը 1512-1735-ի ընթացքին տասնեակ անգամներ փոփոխութիւններ կրած է, սակայն հայերու յիշողութեան մէջ ամենամեծ հետքը ձգած է Ցեղասպանութեան արհաւիրքը, որ տեղի ունեցած է 1915-18-ի ընթացքին: Այսօր Հայաստան դարձած է սիրուած նպատակակետ ոչ մեծ պիտոճով եւրոպացի ճանապարհորդներու համար: Անցեալ տարուան ընթացքին արտասահմանցի զքօսաշրջիկներու թիւը Հայաստանի մէջ հասաւ 1,2 միլիոնի, որ մօտ 11,3 տոկոսով կը գերազանցէր նախորդ տարուան ցուցանիշը: Լեռնային ու ամուր բնակավայրը արշաւներու եւ բացօթեայ ձեռնարկներու համար հրաշալի նախապայման կը ստեղծէ: Զրիստոնէութիւնը որպէս պետական կրօն աշխարհի մէջ առաջինը ընդունած Հայաստանը, կրնայ հպարտանալ անհամար վանական համալիրներով ու եկեղեցիներով, որոնք բոլորն ալ անվճար են այցելելութեան համար: Բացի այդ հասարակական փոխադրամիջոցները վստահելի ու ապահով են, հերթեր ու խճողումներ շատ չկան, եւ ամէն ինչ համեմատաբար արժան է: 5 աստղանի հիւրանոցի մէջ նախատեսեցէք վճարել մօտ 130 տոլար մէկ գիշերուան համար», կը նշուի Հայաստանի մասին Foxnews-ի յօդուածին մէջ:



Հայաստանի հետ զքօսաշրջային դրախտավայրերու ցանկին վրայ յայտնուած են նաեւ Գոլումպիան, Հարաւային Ափրիկեան Հանրապետութիւնը, Նիքարակուան, Հիւսիսային Իրլանտան, Ռուստան, Զրովաթիան, Մեանմարը (Պիրմա) եւ Ճամայքան:

Աթէշեան Խօսած է Վանի Պատարագը Չեղեալ Յայտարարելու Դրդապատճառներուն Մասին

Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ արքեպիսկոպոս Արամ Աթէշեան խօսած է՝ Վանայ լիճի Աղթամար կղզիի Սուրբ Խաչ եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 6-ին նախատեսուած պատարագը չեղեալ յայտարարելու դրդապատճառներուն մասին: Այս մասին կը հարողրէ Ermenihaber.am-ը՝ վկայակոչելով Demok-rathaber լրատուամիջոցը:



Աթէշեան նշած է, որ պատարագի չեղեալ յայտարարման պատճառը եղած է առաջին հերթին անվտանգութիւնը:

Պոլսոյ հայ համայնքի հոգեւոր առաջնորդը ընդձեռնած է, որ պատարագի յետաձգումը պայմանաւորուած է վերջերս Թուրքիոյ արեւելեան շրջաններուն մէջ տեղի ունեցող՝ թուրք-քրտական բախումներուն հետեւանքով ստեղծուած լարուած իրավիճակով:

«Տեղի ունեցող իրադարձութիւններու պատճառով մեր համայնքի անդամներուն մօտ վախ կայ եւ անոնք կը խուսափին այդ շրջանները երթալ: Մենք ալ պատարագի եւ արարողութեան մասնակիցներու անվտանգութիւնը ապահովելու պատճառով, որոշոցիք Սեպտեմբեր 6-ին նախատեսուած պատարագը չեղեալ յայտարարել: Սակայն ատիկա չի նշանակեր, որ պատարագը ընդհանրապէս տեղի պիտի չունենայ: Երկրին մէջ իրավիճակը կայունանալէն յետոյ պատարագը պիտի իրականանայ», ըսած է Աթէշեան:

Անդրադառնալով վերոնշեալ բախումներուն Աթէշեան նշած է, որ հակամարտող կողմերը հանդիպելով իրար հետ, պետք է փոխհամաձայնութեամբ լուծեն այս հարցը:

«Կառավարութիւնը պետք է այս խնդիրը անապայման խաղաղութեամբ լուծէ: Կրակի դարբեցումը երկրի շահերէն կը բխի: Եթէ այսպէս շարունակուի, ապա այս իրավիճակը Թուրքիոյ մէջ ապրող որեւէ ցեղային խումբի մեծ վնաս կը հասցնէ», եզրափակած է Աթէշեան:

**Our e-mail addresses are:**  
zartonkadl@gmail.com website:  
zartonkdaily@yahoo.com www.zartonkdaily.com



# Մարզական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂԱՇԿԵՐՏ ՅԱՂԹԱԿԱՆ

Հայաստանի ֆուտբոլի ֆիդայականության 5-րդ հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Արարատ - Ալաշկերտ 1-2  
- Շիրակ - Բանանց 1-1

## ՄԱՍԿՈՑ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ ԴԺՈՒՄՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Սպանիոյ ֆուտբոլի ֆիդայականության երկրորդ հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Վիլարեալ - Եսփանիոլ Պարսելոնա 3-1  
- Պարսելոնա - Մալախ 1-0  
- Ռեալ Մատրիտ - Ռեալ Պեթիա 5-0

## ԳԵՐՄԱՆԻՅԱ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՐՆ ԴԱՐՁԵԱԿ ՅԱՂԹԱԿԱՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ֆիդայականության 3-րդ հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Պայրն Միսիխ - Պայրն Լեվերքուզըն 3-0



- Վոլֆսպուրկ - Շալքե04 3-0  
- Բեյլն - Յամպուրկ 2-1  
- Մայնց05 - Յանովեր96 3-0

## ԱՆԳԼԻՅԱ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԵԼՍԻՆ ԵՒ ԼԻՎԵՐՓՈՒԼԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Անգլիոյ ֆուտբոլի ֆիդայականության 4-րդ հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Մանչեսթըր Սիթի - Ուաթֆորտ 2-0  
- Չելսի - Բրիսթոլ Փալաս 1-2, Լիվերքուլ Ետնա - Արսենալ 0-1  
- Էյ Էֆ Սի Պորսմութ - Լեսթըր Սիթի 1-1  
- Լիվերքուլ - Ռեյսը Յեմ Ետնա. 0-3

## ՊՐԱՉԻԼԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Պրագի ֆուտբոլի ֆիդայականության 20-րդ և դարձի առաջին հանգրուանին, առաջատար «Զոլինի»-ն իր դաշտին վրայ յաղթեց Պեյս Զորիգոնի «Զոլինի»-ին 3-0 հաշիւով: Վակներ Լալը նշանակեց առաջատարին երկու կոլերը 15րդ և 48րդ վայրկեաններուն, երկրորդը՝ Մալքոմի փոխանցումով: Ծառտոն նշանակեց 44րդ վայրկեանին, Վակներ Լալի փոխանցումով: Այս հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Ալթինքոյ Սիւնթո - Փալմերա 2-1  
- Կոլեր.Լ. Փրաթթո 18րդ, 37րդ տուգ. - Ատրեյ ժիլլոթթո 5րդ, - Փոլքեթ Փրեթթա - Կրեմիո 0-0  
- ժոյիսիլի - Ֆլումինենսէ 2-1  
- Ֆլամենկո - Սաօ Փալո 2-1  
Դասարում.  
1-Զոլինիին 43 կետ, 2-Ալթինքոյ Սիւնթո 39 կետ, 3-Կրեմիո 37 կետ,  
Ռմբարկուներն են՝ 1-Ռիքարտո Օլիվերա (Սանթա) 11 կոլ, 2-Լ. Փրաթթո (Ալթինքոյ Սիւնթո) 9 կոլ, 3-Ալեքսանտր Փաթթո (Սաօ Փալո) 8 կոլ,

## ՈՐՈՒԿՈՒՅԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ ՆԱՍԻՈՆԱԼԸ ԵՒ ՏԱՆՈՒԴԻՈՆ ԴԱՐՁԵԱԿ ՅԱՂԹԱԿԱՆ

Ուրուկուէի ֆուտբոլի ֆիդայականության 2-րդ հանգրուանին, Մոնթեվիտոյի «Նասիոնալ»-ը իր դաշտին վրայ յաղթեց «Ռիվըր Փլէյթ»-ին 2-1 հաշիւով: Կարսիան 23րդ վայրկեանին նշանակեց հիւրերուն կոլը, մինչ Ամարալը 81րդ և Ռոմերոն 89րդ վայրկեանին նշանակեցին «Նասիոնալ»-ին կոլերը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
- Տանուպիօ - Չերո 3-1  
- Փենիարոլ - Էլ Թանքե Սիլի 2-2  
- Վիլլա Թերեզա - Ռոնտըրըզ 2-3  
Դասարում.  
1-Նասիոնալ 6 կետ, 2-Տանուպիօ 6 կետ, 3-Փենիարոլ 4 կետ, Ռմբարկուներն են՝ 1-Կ. Օլիվերա (Տանուպիօ) 3 կոլ, 2-Լ. Բավալիսի (Ֆենիքս) 2 կոլ, 3-Լ. Տե Փենա (Նասիոնալ) 2 կոլ/

## ԻՐՈՒԲԱ ԼԻԿԻ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Իւրոբա Լիկի խմբակներու վիճակագրութիւնը կատարուեցաւ: Խմբակները բաժնուեցան հետևեալ ձևով.  
Ա. Խմբակ. Այաքս, Սելթիք, Ֆեներբախէ, Մոլտե, Բ. Խմբակ. Պորտո, Լիվերքուլ, Ռուպին Զազան, Սիոն, Գ. Խմբակ. Պորուսիա Տորթմունտ, Զրասնատար, ՓԱՕԲ, Զապալա,

Է. Խմբակ. Սեթըր, Լացիօ Ռոմա, Ռոզընալըրկ, Սելթ Էթիկ, Ը. Խմբակ. Պեշիկթաշ, Լոքոմոթիւ Մոսկուա, Սքեստերպեու, Սիդրթիկ Լ., Թ. Խմբակ. Պազըլ, Պելենեստ, Ֆիորենթինա, Լեխ Փոզան, Ժ. Խմբակ. Անտըրլէխթ, Մոնաքո, Զարապադ, Թորընհեմ Զոցիլըր, ԺԱ. Խմբակ. ԱՓՕԷԼ, Ասթերա Թրիփոլիս, Շալքե04, Սիարթա Փրակ, ԺԲ. Խմբակ. Էյ Զետ ալքմար, Աթլետիք Պիլաօ, Աուկուպուրկ, Փարթիզան Պել.

## ԼԻՈՆԷԼ ՄԵՍՍԻՆ՝ ԵՐՈՂԱՅԻ ԱՄԵՆԱԼԱԿ ՖՈՒԹՊՈԼԻՍ

«Պարսելոնա»-ի եւ Արժանիքի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսսին ընտրուեցաւ 2014-2015 տարեշրջանի ամենալաւ ֆուտբոլիստ: Ան անցեալ տարեշրջանին իր խումբին՝



«Պարսելոնա»-ին հետ շահած էր Սպանիոյ ֆիդայականութիւնը, Զոփա Տէլ Ռեյի տիտղոսը, Զեմփիըզ Լիկի տիտղոսը եւ աշխարհի ֆիդայականութեան երկրորդ դիրքը Արժանիքի հաւաքականին հետ: Անոր մրցակիցներն էին «Ռեալ Մատրիտ»-ի փորթուկալցի յարձակող Զիսթիանո Ռոնալտոն եւ «Պարսելոնա»-ի ուրուկուէցի յարձակող Լուիս Սուարէզը: Այս տիտղոսը 2011-ին շահած էր Մեսսին, 2012-ին տիտղոսը շահած էր սպանացի Անտրես Ինիեստան, 2013-ին զայն շահած էր «Պայրն Միսիխ»-ի ֆրանսացի ֆրանք Ռիպերիս, իսկ 2014-ին Զիսթիանո Ռոնալտոն:

## ՖԱԿԻՑ ԸՆԵՆԹՐԱՑՈՒ ՄԻԱՑԱՒ ՄՈՆԱԲՈՅԻՆ

«Ռեալ Մատրիտ»-ի եւ Փորթուկալի հաւաքականի պաշտպան Ֆապիօ Ընեսթրաօ մէկ տարուան համար միացած է ֆրանսական «Մոնաքո» ակումբին:

## ԱՌԵԹՈՒՄ ԱՆՆԱՐԴԻ ԱՆՈՅՑԱՆՈՒԹՅՈՒՆ ՇԵԼԻ ԷՆ ՖՐԵՅՅԸՐ ՓՐԱՅԱԸ ՇԱՐԵՑԱԿ ԵՐԿՐՈՐԴ ՏԻՏՂՈՍԸ

Չինաստանի մայրաքաղաք Պեյճինգի մէջ տեղի ունեցող աշխարհի ալթիթիքի ֆիդայականութեան ութերորդ օրը տեղի ունեցաւ 4x100 մետր դրօշաբարձի կիներու մրցումը: Ծամայեացի Շելի Էն Ֆրեյզըր Փրայս շահեցաւ իր երկրորդ տիտղոսը Ծամայեացի խումբին հետ: Վիտյանութեան ետքերորդ եւ ութերորդ օրերուն արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
20 քմ քալելու կիներու մրցումին, առաջին դիրքը գրաւեց չինացի Յոնկ Լիուն, արձանագրելով 1:27.45 ժամ արդիւնք, նոյն արդիւնքը արձանագրեց չինացի Խիու Մու, յաջադէպ անցնելով ուրբանացի Լիուսիա Օլիանսիւքայէն՝ 1:28.13 ժամ: Դոնացատկի կիներու մրցումին առաջին դիրքը գրաւեց ամերիկացի Թիանա Պարթոլեան, արձանագրելով 7.14 մետր արդիւնք, յաջադէպ անցնելով բրիտանացի Շարա Փրոքթըրէն՝ 7.07 մետր եւ սերպ Իվանա Շիվակովիչէն՝ 7.01 մետր:  
200 մետր վազքի կիներու մրցումին, առաջին դիրքը գրաւեց իտալացի Տաֆնէ Շիփըզը, արձանագրելով 21.63 երկվայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով ճամայեացի Յելեն Թոմփսընէն՝ 21.66 երկ. եւ ճամայեացի Վերոնիքա Զեմփալը Պրաունըն՝ 21.97 երկ.:

100 մետր արգելարշաւի կիներու մրցումին տիտղոսը շահեցաւ ճամայեացի Տանիէ Ուիլիզըզը, արձանագրելով 12.57 երկվայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով գերմանացի Սիլսի Ռոլետէրէն՝ 12.59 երկ. եւ պելաուս Ալիսա Թալայէն՝ 12.66 երկ.:

400 մետր մասթըրզ վազքի կիներու մրցումին, առաջին դիրքը գրաւեց բրիտանացի Սառա Լուիզ Զեյթընը, արձանագրելով 1:00.05 վայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով բրիտանացի Վիրճինիա Զորին Միչընէն՝ 1:00.81 վայրկեան եւ իտալացի Էլիզաբեթ Կել Ուիլզըզը՝ 1:02.54 վայրկեան:

Բարձրագատկի կիներու մրցումին առաջին դիրքը գրաւեց ռուս Մարիա Զուչիան, արձանագրելով 2.01 մետր արդիւնք, յաջադէպ անցնելով իտալացի Պալմա Պաչիչէն՝ 2.01 մետր եւ ռուս Աննա Չիլերովայէն՝ 2.01 մետր: Այս մարզաձեւին մէջ երբ մրցակիցները ցատկած բարձրութեամբ կը հասնարին, Լիկաի կ'անունի իրենց փորձերուն թիւը: Կը յաղթէ ամենաբարձր փորձով յաղթող մարզիկը: Այս ձեւով Մարիան ուներ 6 փորձ, Պալման՝ 7 փորձ, իսկ Աննան՝ 7 փորձ:  
800 մետր վազքի կիներու մրցումին, առաջին դիրքը գրաւեց պելաուս Մարիա Արգամասովան, արձանագրելով 1:58.03 վայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով քանադացի Սելիսա Պիշըփէն՝ 1:58.12 վայրկեան եւ բենիացի Եուսիա Ծեփընէ Սուլմէն՝ 1:58.18 վայրկեան:

4x100 մետր դրօշաբարձի կիներու մրցումին, առաջին դիրքը գրաւեց ճամայեացի, արձանագրելով 41.07 երկվայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով ԱՄՆ-էն՝ 41.68 երկվայրկեան եւ Թրինիտադէն՝ 42.03 երկվայրկեան: Ծամայեացի խումբին մաս կը կազմէին Վերոնիքա Զեմփալը Պրաունը, Նաթաշա Մորիսընը, Էլեն Թոմփսընը եւ աշխարհի ֆիդայական Շելի Էն Ֆրեյզըր-Փրայսը, որ շահեցաւ իր երկրորդ տիտղոսը:

110 մետր արգելարշաւի տղոց մրցումին տիտղոսը շահեցաւ

ռուս Սերկէյ Շուպենցովը, արձանագրելով 12.98 երկվայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով ճամայեացի Յենզըլ Փարչմընէն՝ 13.03 երկ. եւ ամերիկացի Արիս Մերրիթէն՝ 13.04 երկ.:

50 քմ քալելու տղոց մրցումին, առաջին դիրքը գրաւեց սլովակ Մաթէյ Թոթը, արձանագրելով 3:40.32 ժամ արդիւնք, յաջադէպ անցնելով աւստրալիացի Շարլետ Թելընթէն՝ 3:42.17 ժամ եւ ճարնցի Թաքայուքի Թանիէն՝ 3:42.55 ժամ:

800 մետր մասթըրզ վազքի տղոց մրցումին, առաջին դիրքը գրաւեց բրիտանացի Տեյվիտ Յիթը, արձանագրելով 2:00.92 վայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով շուէտացի Կուսնար Տիլթէնէն՝ 2:03.41 վայրկեան եւ քանադացի Մայքըլ Շերարէն՝ 2:03.61 վայրկեան:

5000 մետր վազքի տղոց մրցումին, առաջին դիրքը գրաւեց բրիտանացի Մոհամմէտ Ֆարահը, արձանագրելով 13:50.38 վայրկեան արդիւնք, յաջադէպ անցնելով բենիացի Զալէա Նտի-քուլէն՝ 13:51.75 վայրկեան եւ եթովպիացի Յակոս Կեպիլվեթէն՝ 13:51.86 վայրկեան: Այս բրիտանացիին երկրորդ տիտղոսն էր 10000 մետրի տիտղոսն էր:

Սկաւառակի նետումի տղոց մրցումին առաջին դիրքը գրաւեց լեհ Փիոթըր Մալախովսքին, արձանագրելով 67.40 մետր արդիւնք, յաջադէպ անցնելով պելաուս Գիլիսի Միլանովէն՝ 66.90 մետր եւ լեհ Ռոպըրթ Ուրպանէքէն՝ 65.18 մետր:

Տասնամարտի (այս մարզաձեւը կ'ընդգրկէ 10 մարզաձեւեր՝ 100 մետր վազք, հեռացատկ, գունտ, բարձրցատկ, 400 մետր վազք, 110 մետր արգելարշաւ, սկաւառակ, ձողափայտով ոստում, կիզակ եւ 1500 մետր վազք) տղոց մրցումին առաջին դիրքը գրաւեց ամերիկացի Էշթըն Իթընը, արձանագրելով 9045 կետ, որ աշխարհի տղոց մրցումի է, յաջադէպ անցնելով քանադացի Տամիան Ուորնըրէն՝ 8695 կետ եւ գերմանացի Ռիքո Ֆրայմուլթէն՝ 8561 կետ:

Մետալներու դասարումը 7 օր ետք.

1-Բենիա	6 ոսկիէ,	5 արծաթէ,	3 պրոնզէ,
2-Ծամայեաց	6,	2,	3
3-ԱՄՆ	5,	5,	6
4-Բրիտանիա	4,	1,	0
5-Լեհաստան	3,	1,	4

## ԾԱՏՐԱԿ ՍԻՆԵՖԻՆՏ ԵՍԻ ՄԵՍՏԵՐԸ ԱՐՈՆԵԱՆԸ ՀԱՄԱԱՐԵՑԱԿ ԶԱՐԼՍԸՆԻ ՀԵՏ

ԱՄՆ-ի Սելթ Լուիս քաղաքին մէջ սկսած ճատրակի միջազգային «Սիլեքֆիլտ Զաք»ի մրցաշարի երկրորդ հանգրուանին, Հայաստանի ներկայացուցիչ Լեւոն Արոնեանը սեւ քարերով հաւասարեցաւ ֆրանսացի Մաքսիմ Վաշիէ Լակրաւին հետ: Երրորդ հանգրուանին ան ճերմակ քարերով հաւասարեցաւ իտալացի Անիշ Կիրիին հետ: Զորրորդ հանգրուանին, ան սեւ քարերով յաղթեց ամերիկացի Ուեսլի Սոյին: Հինգերորդ հանգրուանին ճերմակ քարերով հաւասարեցաւ Կրիզլուքին հետ: Իսկ վեցերորդ հանգրուանին, Արոնեանը ճերմակ քարերով հաւասարեցաւ աշխարհի ֆիդայական Մակնուս Զարսընըն հետ: Միւս մրցումներուն արձանագրուեցան հետևեալ արդիւնքները.  
Վաշիէ Լակրաւ - Թոմիալով 1-0, Կիրի - Անանտ 0.5-0.5, Սո - Նաքամուրա 0-1, Կրիզլուք - Զարուանա 1-0, Դասարումը վեց հանգրուան ետք.  
1-Զարսըն 4 կետ,  
2-Արոնեան 4 կետ,  
3-Վաշիէ Լակրաւ 3.5 կետ,  
4-Նաքամուրա 3.5 կետ

AGBU Schools Logo

AGBU Schools Հարմարեցումները  
Հարմարեցումները կը յայտնեն թէ անցեալ տարեշրջանի կրթական, մարզական եւ սպորտային բնույթի գործունէութիւններն են, ու Լիբանանեան պետական բնութեանը արձանագրուած փայլուն արդիւնքներն են. 2015-2016 տարեշրջանը պիտի սկսի հետեւեալ ժամանակացոյցին համաձայն:-

- 9-րդ եւ 12-րդ դասարանները՝ Հինգշաբթի, 10 Սեպտեմբեր
- 7-րդ, 8-րդ, 10-րդ եւ 11-րդ դասարանները՝ Հինգշաբթի, 17 Սեպտեմբեր
- Մանկապարտէզ եւ Նախակրթարան՝ Երկուշաբթի, 28 Սեպտեմբեր

Նախկին ու նոր աշակերտներուն լրացուցիչ արձանագրութիւնները պիտի կատարուին 3 Սեպտեմբերէն սկսեալ, ամէն օր ժամը 9:00-1:00:

AGBU Schools Հարմարեցումները  
Հարմարեցումները կը շարունակէ ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ:

AGBU Schools Հարմարեցումները  
Հարմարեցումները կը շարունակեն ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ:

Հետաձայն՝ 01-481319; 04-413933  
Ե-մատակ հասցէ՝ agbuschools@gmail.com  
Կայքէջ՝ www.agbuschools.edu.lb  
Դիմատետր՝ www.facebook.com/groups/AGBUSchools

AGBU Schools Հարմարեցումները՝ փայլուն արդիւնքներով:

Հարմարեցումները կը շարունակեն ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ:

Հարմարեցումները կը շարունակեն ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ:

Հարմարեցումները կը շարունակեն ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ:

Հարմարեցումները կը շարունակեն ունենալ Կենսաբանական (ԼՏ), Գիտական (ԳՏ) եւ Տնտեսագիտական (ՏԵ) բաժիններ, իսկ 11րդ դասարանի պարագային՝ Գիտական եւ Տնտեսագիտական բաժիններ: